225

30 մարտի 2021թ.

ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 006485 **/16**
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 30.03.2021 թվականի թիվ _____ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 6485 վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 21.12.2020թ. թիվ 4133729 ակտի՝ որ Ա/Ձ Լենա Ղազարյանը /ՀՎՀՀ՝ 66912109, ք. Սպիտակ, Տեր-Սիմոնյան փ. 139, անձնագիր՝ AB0551828, ՀԾՀ՝ 6903710116/ հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացվող դրամական միջոցների հաշվառումը վարել է այնպիսի խախտումով, որը կարող էր առաջացնել հարկի նվազեցում:

Նկարագրված արարքի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 1-ին մասով:

Կողմը պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին՝ չի ներկայացել: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Այն փաստը, որ Լենա Ղազարյանի կողմից մեկ տարվա ընթացքում կրկին անգամ կատարվել է իրավախախտում, որի համար արդեն ենթարկվել է վարչական տույժի (27.02.2020թ. թիվ 404748/16 որոշում), սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-րդ, 244[2], 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 1-ին մասի՝ Լենա Ղազարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 25.000 (քսանհինգ հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն.Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. 900005240487՝ վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:
Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնակցեցի գործի քննությանը, որոշման վերաբերյալ առարկություններ չունեմ _____